

«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»

«Յունիբանկ» ՓԲԸ խորհրդի

«11» մայիսի 2011թ.

որոշմամբ



ՅՈՒՆԻԲԱՆԿ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ՓԲԸ ԵՎ ԲԱՆԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՄԻՋԵՎ
ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՊԱՐՏԱԴԻՐ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ
ԵՆԹԱԿԱ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԵՎ
ՊԱՀՊԱՆՄԱՆ

/ ց ո թ խ մ բ ա գ թ ու թ յ ու ն /

Ե Ր Ե Վ Ա Ն - 2 0 1 1

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Յունիբանկ» փակ բաժնետիրական ընկերության ««Յունիբանկ» ՓԲԸ և Բանկի հետ կապված անձանց միջև գործարքների իրականացման և հրապարակման ենթակա այլ տեղեկությունների հավաքագրման և պահպանման ընթացակարգ»-ով (այսուհետ՝ Ընթացակարգ) սահմանվում են «Յունիբանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) և Բանկի հետ կապված անձանց միջև իրականացվող գործարքների համար անհրաժեշտ պահանջները՝ համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի դրույթների:

1.2. Սույն Ընթացակարգի իմաստով՝

1.2.1. *գործարքների պահանջներ*՝ թույլատրելի սահմանաչափը, ժամկետները, տոկոսադրույքները, վարկունակության աստիճանը, ապահովվածությունը, ընդունելի ռիսկերի աստիճանը,

1.2.2. *Բանկի հետ կապված անձինք*՝

ա) Բանկի ղեկավարները,

բ) Բանկի կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձինք,

գ) "ա" և/կամ "բ" կետերում նշված անձանց հետ փոխկապակցված և (կամ) համագործակցող անձինք,

դ) Բանկի հետ փոխկապակցված անձինք:

1.2.3. *Բանկի հետ կապված անձանց վերաբերյալ տեղեկություններ*՝

ա) Բանկի Խորհրդի նախագահի, անդամների, Վարչության նախագահի, անդամների, Գլխավոր հաշվապահի, Ներքին աուդիտի ղեկավարի, անդամների վերաբերյալ տեղեկություններ,

բ) Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև Բանկի ղեկարտամենտի, վարչության, բաժնի և ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի սահմանած չափանիշներով հիմնավորված՝ Կենտրոնական Բանկի խորհրդի կարծիքով որևէ կերպ Բանկի հիմնական գործունեության հետ կապված կամ Վարչության նախագահի անմիջական ղեկավարության ներքո աշխատող կամ Բանկի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ ազդեցություն ունեցող աշխատակիցների վերաբերյալ տեղեկություններ,

գ) Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց վերաբերյալ տեղեկություններ:

1.3. Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ունեցող են համարվում «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի իմաստով այդպիսիք հանդիսացող անձինք:

1.4. Սույն Ընթացակարգի իմաստով Բանկի վերաբերյալ պարտադիր հրապարակման ենթակա տեղեկություններ են համարվում «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 43 հոդվածով սահմանված տեղեկություններ:

ԳԼՈՒԽ 2. ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ ԲԱՆԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՆՉԱՆՑ ՄԻՋԵՎ

2.1 Բանկի հետ կապված իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ կնքվող գործարքների պահանջների նկատմամբ ցուցաբերվում է տարբերակված մոտեցում:

2.2 Բանկը 2.1. կետով նշված անձանց հետ գործարքներն իրականացնում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 39 հոդվածի պահանջների պահպանմամբ:

2.3 Բանկի հետ կապված անձանց հետ կնքվող գործարքները չեն կարող վերջիններիս համար առավել բարենպաստ պայմաններ (այդ թվում՝ գործարք կնքելու հնարավորություն, զին, տոկոսներ, ժամկետ և այլն) նախատեսել, քան Բանկի աշխատակից չհամարվող այլ ֆիզիկական անձանց, ինչպես նաև իրավաբանական անձանց հետ կնքված նույնանման գործարքները, բացառությամբ Բանկի գործադիր տնօրենի ներկայացմամբ Բանկի խորհրդի կողմից հաստատված դեպքերի:

2.4 Բանկի և Բանկի հետ կապված անձանց միջև իրականացվող գործարքները կնքվում են Բանկի կողմից տվյալ տեսակի գործարքների կնքման համար նախատեսված համապատասխան ընթացակարգերի պահպանմամբ:

2.5 Բանկի և Բանկի հետ կապված իրավաբանական անձանց միջև իրականացվող «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 34 հոդվածի 1-ին մասով նախատեսված գործարքները Բանկի Վարչության ներկայացմամբ /բացառությամբ «դ», «ե», «ժ» և «Ժբ» կետերի/ հաստատվում են Բանկի Խորհրդի կողմից:

2.6 Բանկի և Բանկի հետ կապված ֆիզիկական անձանց միջև իրականացվող գործարքների համար պահանջները ներկայացված են սույն ընթացակարգին կից Հավելված 1-ում:

2.7 Բանկի և Բանկի հետ կապված ֆիզիկական անձանց միջև իրականացվող վերոնշյալ պահանջներին չբավարարող կամ այլ գործարքների դեպքում Բանկի Վարչությունը դրանք պարտադիր ներկայացնում է Բանկի Խորհրդի հաստատմանը: /Հավելված 1/

ԳԼՈՒԽ 3. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

3.1 Բանկի Իրավաբանական դեպարտամենտը Բանկի Վարչության նախագահի կամ Վարչության անդամների պահանջով վերջիններիս ներկայացնում է սույն Ընթացակարգի 1.2.3 կետի “ա” և “բ” ենթակետերով սահմանված անձանց վերաբերյալ Հավելված 2-ում նախատեսված վերանայված տեղեկությունները:

3.2 Սույն ընթացակարգի 1.2.3 կետի “ա” և “բ” ենթակետերում նշված անձինք Իրավաբանական դեպարտամենտին են ուղարկում/ներկայացնում Հավելված 2-ը էլեկտրոնային ձևով, ինչպես նաև թղթային տարբերակով՝ ստորագրված:

3.3 Սույն Ընթացակարգի Հավելված 2-ի 2.6, 2.8-2.10, 3.3 ենթակետերում, ինչպես նաև 5-9-րդ կետերում սահմանված տեղեկությունների փոփոխությունները 1.2.3 կետի “ա” և “բ” ենթակետերում նշված անձինք փոփոխությունը իրենց հայտնի դառնալուց հետո անհապաղ, սակայն ոչ ուշ, քան մինչև տվյալ աշխատանքային օրվա ավարտը պարտավոր են ներկայացնել Իրավաբանական դեպարտամենտ:

3.4 Իրավաբանական դեպարտամենտը սույն Ընթացակարգի 3.3 կետում նշված տեղեկությունները ստանալուց հետո պարտավոր է մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը Սի-Բի-Էյ-նեթ համակարգի միջոցով դրանք ուղարկել Կենտրոնական Բանկ: Ընդ որում, սույն կանոնակարգի Հավելված 2-ով սահմանված միջնորդագիրը ներկայացվում է էքսել (excel) ֆորմատով:

3.5 Սույն ընթացակարգի 1.2.3 կետի “ա” և “բ” ենթակետերում նշված անձանց վերաբերյալ թարմացված տեղեկությունները՝ համաձայն Հավելված 2-ի էլեկտրոնային և թղթային տարբերակներով պահպանվում են Իրավաբանական դեպարտամենտում:

ԳԼՈՒԽ 4. ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔՈՒՄ ԵՎ ԲԱՆԿԻ ԱՆՈՒՆԻՑ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ ՊԱՐՏԱԴԻՐ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 43-րդ հոդվածի Հասարակայնության հետ կապերի ծառայության ղեկավարը պարտավոր է ինտերնետում՝ բանկի տնային էջում, մշտապես հրապարակել՝

ա) բանկի ֆինանսական հաշվետվությունները եւ հաշվետվությունների վերաբերյալ արտաքին աուդիտի եզրակացության պատճենը /այդ թվում մամուլում՝

բ) տարեկան ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարությունը /նաև մամուլում/

գ) շահութաբաժիններ վճարելու մասին որոշումների պատճենները, շահութաբաժնային քաղաքականությունը սահմանող ակտի պատճենը օրենքով սահմանված կարգով,

դ) Բանկում նշանակալից մասնակցություն ունեցող մասնակիցների մասին տեղեկատվություն

ե) Բանկի խորհրդի, գործադիր մարմնի անդամների ցանկը եւ անձնական տվյալները՝ օրենքով սահմանված կարգով,

4.2. Հասարակայնության հետ կապերի ծառայության ղեկավարը պարտավոր է հրապարակել սույն ընթացակարգի 4.1 կետի "ա-ե" ենթակետերում նշված տեղեկությունների մեջ տեղի ունեցած փոփոխությունները՝ դրանք տեղի ունենալու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում:

4.3. Հասարակայնության հետ կապերի ծառայության ղեկավարը պարտավոր է ինտերնետում՝ բանկի տնային էջում եւ մամուլում հրապարակել թարմացված տեղեկություններ՝ Բանկի կողմից ավանդների ընդունման, վարկերի տրամադրման, ինչպես նաև մատուցվող բոլոր այլ ծառայությունների եւ հաճախորդների համար իրականացվող ֆինանսական գործառնությունների վերաբերյալ, այդ թվում՝ տոկոսադրույքներ, ծառայության միջնորդավճարեր, ժամկետայնություն եւ էական այլ պայմաններ:

4.4. Պատասխանատու ստորաբաժանումներն՝ իրենց կողմից տրամադրվող տեղեկատվության մեջ փոփոխությունների առկայության դեպքում, պարտավոր են եռօրյա ժամկետում, բայց ոչ ուշ քան այդ փոփոխությունների ուժի մեջ մտնելը, դրանք տրամադրել Հասարակայնության հետ կապերի ծառայությանը՝ Բանկի կայքում տեղադրելու համար:

4.5. Բանկի ստորաբաժանումները պարտավոր են Բանկի վերաբերյալ պարտադիր հրապարակման ենթակա այլ տեղեկությունները պարբերաբար թարմացնել և դրանք ներկայացնել Բանկի Հասարակայնության հետ կապերի ծառայության ղեկավարին՝ Բանկի ինտերնետային կայքում համապատասխան փոփոխություններ կատարելու և/կամ ՋԼՄ-ներում համապատասխան տեղեկությունների հրապարակումն ապահովելու նպատակով:

4.6. Հավելված 4-ում նշված պատասխանատու ստորաբաժանումներն՝ իրենց կողմից տրամադրվող տեղեկատվության մեջ փոփոխությունների առկայության դեպքում, պարտավոր են եռօրյա ժամկետում, բայց ոչ ուշ քան այդ փոփոխությունների ուժի մեջ մտնելը, դրանք տրամադրել Հասարակայնության հետ կապերի ծառայության ղեկավարին՝ Բանկի տնային էջում տեղադրելու և/կամ ՋԼՄ-ներում համապատասխան տեղեկությունների հրապարակումը կատարելու նպատակով:

4.7. Պատասխանատու ստորաբաժանումները տեղեկատվությունը տրամադրում են էլեկտրոնային եղանակով:

4.8. Բանկի կայքի համար տեղեկատվության հավաքագրման եւ տեղադրման, ինչպես նաեւ մամուլում Բանկի վերաբերյալ տեղեկությունների հրապարակման համար պատասխանատվություն է կրում Հասարակայնության հետ կապերի ծառայությունը:

4.9. Բանկի կողմից իր գործունեության եւ մատուցված ծառայությունների վերաբերյալ տեղեկությունների հրապարակման նպատակով Բանկը համագորկածցում է տպագիր մամուլի, էլեկտրոնային ՋԼՄ-երի, հեռուստաընկերությունների եւ ռադիոընկերությունների հետ:

4.10. Մամուլի հետ աշխատանքի հիմնական ուղղություններն են՝

4.10.1. Բանկի ռազմավարության եւ գործունեության լուսաբանում

4.10.2. Նոր ծառայությունների ներկայացում

4.10.3. Գործունեության թվային ցուցանիշների եւ վարկանիշների հրապարակում

4.10.4. Բանկի կողմից իրականացվող հովանավորչական եւ բարեգործական ծրագրերի լուսաբանում

4.11. Մամուլի համար Բանկի կողմից կարող են կազմակերպվել հետեւյալ միջոցառումները՝

4.11.1. Մամլո ասուլիս

4.11.2. Կրթ սեղան

4.11.3. Հարցազրույց

4.11.4. Շնորհանդես

4.12. Բանկի կողմից գործունեության ուղղությունների եւ/կամ մատուցվող ծառայությունների վերաբերյալ մամուլում հրապարակվող տեղեկատվության արժանահավատության եւ արդիականության ապահովման նպատակով, Բանկի անունից ՋԼՄ-երում կարող են հանդես գալ՝

4.12.1. Խորհրդի նախագահը

4.12.2. Խորհրդի անդամները

4.12.3. Վարչության նախագահը

4.12.4. Վարչության անդամները

4.12.5. Հասարակայնության հետ կապերի ծառայության ղեկավարը

4.12.6. Ստորաբաժանումների ղեկավարները եւ մասնաճյուղերի կառավարիչները՝ վերոնշված լիազորված անձանց համաձայնությամբ:

4.13. Բանկում և նրա մասնաճյուղերում առկա է հայտարարություն՝ հրապարակման ենթակա տեղեկությունները հաճախորդներին տրամադրելու վերաբերյալ /Հավելված 5/:



*«Յունիբանկ» ՓԲԸ Բանկի հետ կապված անձանց միջև գործարքների իրականացման և սլարտադիր հրապարակման ենթակա այլ տեղեկությունների հավաքագրման և սլահականման ընթացակարգ
ՀԱՎԵԼՎԱԾ 1*

Պ Ա Ր Տ Ա Վ Ո Ր Ա Գ Ի Ր

ք. Երևան

«___» _____ 201--ք.

Բանկի և բանկի հետ կապված ֆիզիկական անձանց միջև իրականացվող գործարքների համար պահանջները

Գործարքի բնույթը	Թույլատրելի սահմանաչափը	Ժամկետը	Տոկոսադրույքը	Վարկու մականոթյան աստիճանը	Ապահովվածությունը	Ընդունելի ռիսկերի աստիճանը
1. Յպահանջ ավանդ	Բանկում գործող ներքին իրավական ակտերի համապատասխան	-	բանկի սակագներով և դրույքներով սահմանված առավելագույն մեծության շրջանակներում		-	
2. Ժամկետային ավանդ	Բանկում գործող ներքին իրավական ակտերի համապատասխան	Սկսած 30 օրից՝ առավելագույնը 1 տարի	բանկի սակագներով և դրույքներով սահմանված առավելագույն մեծության շրջանակներում		-	
3. Սպառողական վարկ	Բանկի սակագներով և դրույքներով սահմանված մեծության շրջանակներում, ոչ ավել քան նորմատիվային կայտային 0,4%	մինչև չորս տարի	բանկի սակագներով և դրույքներով սահմանված առավելագույն մեծության շրջանակներում	Գերազանց կամ լավ	գրավ, պահում, երաշխիք կամ երաշխավորություն /վերջին երկու ֆինանսական տարում ծահույթով աշխատած կազմակերպության/, տեղեկանք աշխատավարձի վերաբերյալ	աննշան կամ ցածր
4. Վարկային քարտ (Օվերդրաֆտ)	Աշխատավարձի 5-սպառիկի չափով/ ավանդի մինչև 90% չափով, բայց ոչ ավել՝ բանկի սակագներով և դրույքներով սահմանված առավելագույն մեծության չափից	1 տարի	բանկի սակագներով և դրույքներով սահմանված առավելագույն մեծության շրջանակներում մասնավորապես 15% տոկոսադրույքով	Գերազանց կամ լավ	տեղեկանք աշխատավարձի վերաբերյալ	աննշան
6. Հիփոթեքային վարկ	բանկի սակագներով և դրույքներով սահմանված առավելագույն մեծության շրջանակներում, ոչ ավել քան նորմատիվային կայտային 0,8%	բանկի սակագներով և դրույքներով սահմանված առավելագույն մեծության շրջանակներում	բանկի սակագներով և դրույքներով սահմանված առավելագույն մեծության շրջանակներում	Գերազանց կամ լավ	գրավ, պահում, երաշխիք կամ երաշխավորություն /վերջին երկու ֆինանսական տարում ծահույթով աշխատած կազմակերպության/, տեղեկանք աշխատավարձի վերաբերյալ	աննշան կամ ցածր

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 303-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի կողմից իրենց վերաբերյալ տեղեկությունների հրապարակման (տրանսպարանս) կարգ»-ով սահմանված տեղեկությունների թարմացման համար պատասխանատու ստորաբաժանումների ցանկ

Պահանջը	Տեղեկությունների թարմացման համար պատասխանատու ստորաբաժանում
Բանկի առաքելությունը	Վարչություն
Ընդհանուր տեղեկություններ Բանկի գործունեության վերաբերյալ	Աշխատակազմ
Բանկի վարչակազմակերպչական կառուցվածքը գծապատկերի տեսքով	Կադրերի վարչություն
Բանկի պետական գրանցման վկայականը եւ գործող լիցենզիայի պատճենները	Իրավաբանական ղեկարտամենտ
Բանկի գլխամասի գտնվելու վայրը, հեռախոսահամարը, մասնաճյուղերի ցանկը՝ գտնվելու վայրով, հեռախոսահամարներով եւ աշխատանքային ժամերով	Մասնաճյուղային ցանցի զարգացման տնօրինություն
Բանկումատների, ինքնասպասարկման վճարային տերմինալների եւ արժույթի փոխանակման ավտոմատների ցանկը՝ հասցեներով	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն
Բանկի կանոնադրությունը	Իրավաբանական ղեկարտամենտ
Գործարար վարվելակերպի եւ էթիկայի կանոնները /առկայության դեպքում/	Աշխատակազմ
Ուղղակի նշանակալից մասնակիցների անունը /անվանումը/, մասնակցության չափը, գործունեության տեսակը /իրավաբանական անձանց համար/:	Իրավաբանական ղեկարտամենտ
Անուղղակի նշանակալից մասնակիցների անունը /անվանումը/, գործունեության տեսակը, այն ուղղակի նշանակալից մասնակցի անունը /անվանումը/, որի միջոցով մասնակիցը ձեռք է բերել անուղղակի նշանակալից մասնակցի կարգավիճակ կամ այն պահանջը, որի ուժով անձը /անուղղակի նշանակալից մասնակիցը/ կարող է ազդել ընկերության ուղղությունների վրա, առկայության դեպքում՝ նաեւ տվյալ ընկերությունում մասնակցության չափը:	Իրավաբանական ղեկարտամենտ
Բանկի ղեկավարների ցանկը, անունը, ծննդյան ամսաթիվը, կենսագրությունը, զբաղեցրած պաշտոնը: Ղեկավարների ցանկում առկա ընդգրկվում են Բանկի խորհրդի նախագահը եւ անդամները, վարչության նախագահը /գործադիր տնօրենը/, նրա տեղակալները, գործադիր մարմնի անդամները, գլխավոր հաշվապահը, ներքին աուդիտի ղեկավարը:	Աշխատակազմ
Միջանկյալ եւ տարեկան ֆինանսական հաշվետվությունները /ներառյալ կից ծանոթագրությունները/ եւ արտաքին աուդիտորական ընկերության աուդիտորական եզրակացությունը: Հղումներ Բանկի՝ հաշվետու տարվան նախորդող երեք տարիների տարեկան ֆինանսական հաշվետվություններին: Ընդ որում ֆինանսական հաշվետվությունների եւ աուդիտորական եզրակացության հրապարակումը պետք է բավարարի 8/03 կանոնակարգի 8-րդ գլխի պահանջներին:	Հաշվապահական հաշվառման և ամփոփ հաշվետվությունների ղեկարտամենտ
Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ հաշվետվությունը՝ եռամսյակային կտրվածքով, մինչեւ հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը: Հղումներ նորմատիվների վերաբերյալ նախորդ եռամսյակների հաշվետվություններին /առնվազն նախորդ 4 եռամսյակների կտրվածքով/: Եթե ընկերության արտաքին աուդիտի եզրակացությամբ ճշգրտված եւ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունների համաձայն ընկերությունը խախտել է հիմնական տնտեսական նորմատիվ, ապա ընկերությունը վերահրապարակում է այն եռամսյակների ճշգրտված հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ հաշվետվությունները, որոնցում հրապարակվող հաշվետվությունների ճշգրտման արդյունքում առաջացել է նորմատիվի խախտումը: Ընդ որում, սույն կետով սահմանված պահանջը գործում է այն դեպքում, երբ հրապարակվող հաշվետվությունների ճշգրտման պատճառը եղել էր հաշվապահական հաշվառման սխալը:	Հաշվապահական հաշվառման և ամփոփ հաշվետվությունների ղեկարտամենտ
Կանոնադրական կապիտալի փոփոխության մասին տեղեկատվությունը՝ այդ փոփոխությունը Կենտրոնական բանկի կողմից գրանցելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:	Իրավաբանական ղեկարտամենտ

«Յունիքանկ» ՓԲԸ Բանկի հետ կապված անձանց միջև գործարքների իրականացման և պարտադիր հրապարակման ենթակա այլ տեղեկությունների հավաքագրման և պահպանման ընթացակարգ

Եթե Բանկը արժեթղթերի հրապարակային տեղաբաշխում չի իրականացնում, ապա ներկայացվում է հետևյալ տեղեկատվությունը՝	
1. տարեկան ընդհանուր ժողովի մասին, ինչպես նաև բաժնետերերի ժողով հրավիրելուն առնչվող տեղեկատվությունը՝ օրենքով սահմանված կարգով,	Աշխատակազմ
2. ընթացիկ տարվա ընթացքում շահութաբաժիններ վճարելու մասին որոշումները եւ հղումները նախորդ տարիներին ընդունված նմանատիպ որոշումներին /առնվազն վերջին երեք տարվա կտրվածքով/,	Աշխատակազմ
Շահութաբաժնային քաղաքականությունը սահմանող ակտերը /առկայության դեպքում/	Ֆինանսների և ռիսկերի կառավարման տնօրինություն
Հայտարարություն յուրաքանչյուր մասնակցի կողմից «Բանկերի եւ բանկային գործունեության մասին», «Ապահովագրության եւ ապահովագրական գործունեության մասին» կամ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքներով սահմանված տեղեկությունների ստացման /ծանոթանալու/ հնարավորության եւ այդ տեղեկությունների ստացման կարգի, վայրի, ժամկետի, տեղեկությունների տրամադրման համար գանձվող վճարի մասին: Ընդ որում, հայտարարությունում հղում է կատարվում այն իրավական ակտին եւ ակտի հոդվածին, համաձայն որի ծագում է նման իրավունքը եւ այն հասցեին, որտեղ տեղադրված է համապատասխան օրենքը:	Իրավաբանական ղեկարտամենտ
Խորհրդի անդամների, գործադիր տնօրենի եւ գլխավոր հաշվապահի՝ նախորդ տարվա ընթացքում Բանկից ստացված ամբողջ վարձատրության /ներառյալ՝ պարգևատրումները, բանկի համար որոշակի աշխատանք կատարելու դիմաց վճարների, աշխատավարձին հավասարեցված այլ եկամուտների/ չափը: Ընդ որում, Բանկը կարող է սահմանափակել այդ տեղեկության ընթերցման հնարավորությունը, օրինակ՝ գաղտնաբառերի կիրառման միջոցով: Սույն տեղեկությունները հասանելի են դարձվում Բանկի բոլոր բաժնետերերին /մասնակիցներին/:	Հաշվապահական հաշվառման և ամփոփ հաշվետվությունների ղեկարտամենտ
Մինչեւ հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը հաշվետու եռամսյակի եւ դրան նախորդող երեք եռամսյակների ընթացքում Բանկի խորհրդի եւ գործադիր մարմնի անդամների, գլխավոր հաշվապահի եւ նրանց հետ փոխկապակցված անձանց, նշանակալից մասնակիցների եւ նրանց հետ փոխկապակցված անձանց հետ կապված հետևյալ տեղեկատվությունը / ընդ որում, Բանկը կարող է սահմանափակել այդ տեղեկության ընթերցման հնարավորությունը, օրինակ՝ գաղտնաբառերի կիրառման միջոցով /	
1. բանկից ստացված վարկերի եւ փոխառությունների /այդ թվում նաև մարված/ չափը /մեկ թվով/, կշռված տոկոսադրույքը եւ այն ժամանակահատվածը, որի համար հաշվարկված է այդ տեղեկատվությունը: Պարտավորությունները գործող վարկային քարտերի/գծերի եւ օվերդրաֆտների գծով կարող են ընդգրկվել միջին ամսական մեծությամբ,	Վարկային ռեզիստրի սպասարկման և ներքին հաշվետվությունների վարչություն
2. ապահովագրական ընկերության հետ կնքված ապահովագրական պայմանագրերի վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ ապահովագրության օբյեկտը, ապահովագրական գումարը, ապահովագրական սակագինը եւ ապահովագրական հատուցման մեծությունը:	Իրավաբանական ղեկարտամենտ
«Կարգավորում» մատուցող հրապարակվում են հիմնական օրենքների եւ նորմատիվ իրավական ակտերի ցանկը, որոնցով կարգավորվում է Բանկի կողմից ծառայությունների մատուցումը:	Իրավաբանական ղեկարտամենտ
«Հետադարձ կապ» մատուցող ներկայացվում են այն հեռախոսահամարները, էլեկտրոնային հասցեները, փոստային հասցեները եւ այլ կապի միջոցները, որոնցով սպառողները կարող են կապ հաստատել Բանկի հետ: Եթե Բանկի կողմից մատուցվող ծառայությունը հաճախորդին ուղղակիորեն /ոչ միջնորդավորված/ մատուցվում է այլ անձանց կամ կազմակերպությունների կողմից՝ ապա այդ անձանց կամ կազմակերպությունների կապի տվյալները:	Հաճախորդների հետ հարաբերությունների զարգացման տնօրինություն
«Հաճախորդի իրավունքները» բաժնում ներկայացվում են՝	
1. հղում բողոք-պահանջները կարգավորող ներքին իրավական ակտին,	Հաճախորդների սպասարկման որակի հսկողության ծառայություն
2. հեռախոսահամարները, էլեկտրոնային հասցեները, փոստային հասցեները եւ այլ կապի միջոցները, որով հաճախորդները կարող են բողոք-պահանջ ներկայացնել Բանկին,	Հաճախորդների սպասարկման որակի հսկողության ծառայություն

«Յունիբանկ» ՓԲԸ Բանկի հետ կապված անձանց միջև գործարքների իրականացման և պարտադիր հրապարակման ենթակա այլ տեղեկությունների հավաքագրման և պահպանման ընթացակարգ

<p>3. հայտարարություն այն մասին, որ ֆիզիկական անձ հաճախորդը հնարավորություն ունի ներկայացնելու ընկերության եւ հաճախորդի միջև կնքվող գործարքից բխող պահանջները ֆինանսական համակարգի հաշտարարին: Այն դեպքում, երբ ընկերությունը ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր չի կնքել, նշում այդ մասին,</p>	<p>Իրավաբանական դեպարտամենտ</p>
<p>5. հայտարարություն այն մասին, որ ցանկացած անձ իրավունք ունի ստանալու «Բանկերի եւ բանկային գործունեության մասին», «Ապահովագրության եւ ապահովագրական գործունեության» մասին կամ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքներով սահմանված տեղեկությունների ստացման կարգի, վայրի, ժամկետի, տեղեկությունների տրամադրման համար գանձվող վճարի մասին: Ընդ որում հայտարարությունում հղում է կատարվում այն իրավական ակտին եւ ակտի հոդվածին, համաձայն որի ծագում է նման իրավունքը,</p>	<p>Իրավաբանական դեպարտամենտ</p>
<p>6. ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի գտնվելու վայրը, աշխատանքային ժամերը, կապի միջոցները, հղում ֆինանսական գրասենյակի հաշտարարի ինտերնետային կայքին:</p>	<p>Իրավաբանական դեպարտամենտ</p>
<p>Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագների, տոկոսադրույքների եւ այլ հաշվիչներ:</p>	<p>Մանրաձախ բիզնեսի տնօրինություն Կորպորատիվ բիզնեսի տնօրինություն Մանրաձախ ավանդների վարչություն</p>
<p>Բանկը սահմանված ժամկետներում առնվազն 3000 տպաքանակ ունեցող մամուլում /եթ օրենքով այլ տպաքանակ սահմանված չէ/ հրապարակում է .</p>	
<p>1. աուդիտորական ընկերության կողմից հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունները եւ աուդիտորական եզրակացությունը /եթ արտաքին աուդիտի պահանջը սահմանված է օրենքով/ եւ միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների փաթեթը, բացառությամբ կից ծանոթագրությունների,</p>	<p>Հաշվապահական հաշվառման և ամփոփ հաշվետվությունների դեպարտամենտ</p>
<p>2. կանոնադրական կապիտալի փոփոխության մասին տեղեկատվությունը՝ այդ փոփոխությունը կենտրոնական բանկի կողմից գրանցելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում,</p>	<p>Հաշվապահական հաշվառման և ամփոփ հաշվետվությունների դեպարտամենտ</p>
<p>3. հաշվետվություններին կից՝ Բանկը մամուլում հրապարակում է իր կայքի հասցեն՝ նշելով, որ այնտեղ է գտնվում Բանկի ֆինանսական հաշվետվությունների ամբողջ փաթեթը /ներառյալ կից ծանոթագրությունները/:</p>	<p>Հաշվապահական հաշվառման և ամփոփ հաշվետվությունների դեպարտամենտ</p>
<p>4. Օրենքով սահմանված՝ մամուլում պարտադիր հրապարակման ենթակա տեղեկատվությունը հրապարակելուց հետո հնգօրյա ժամկետում Բանկը Կենտրոնական բանկի վիճակագրության վարչությանն է ներկայացնում այդ տեղեկատվությունը պարունակող թերթի /ամսագրի/ օրինակը եւ ֆինանսական հաշվետվությունների ամբողջ փաթեթի էլեկտրոնային տարբերակը:</p>	<p>Հաշվապահական հաշվառման և ամփոփ հաշվետվությունների դեպարտամենտ</p>
<p>Ինտերնետային կայքում մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկություններն հրապարակելիս Բանկը ներկայացնում է իր կողմից մատուցվող յուրաքանչյուր ծառայության մասին էական տեղեկությունները, սակագները, ծառայությունների մատուցման պայմանները, ինչպես նաև այն կապի միջոցները /հեռախոսահամարները եւ/կամ ինտերնետի կայքի հասցեն/, որոնցով կարելի է սպառիչ տեղեկություններ ստանալ բանկի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ:</p>	<p>Մանրաձախ բիզնեսի տնօրինություն Կորպորատիվ բիզնեսի տնօրինություն Մանրաձախ ավանդների վարչություն Ֆինանսական շուկաներում գործառնությունների դեպարտամենտ Դրամական փոխանցումների համակարգի սպասարկման և հսկողության դեպարտամենտ</p>
<p>Բոլոր տեսակի վարկերի գծով տեղեկություններում պետք է առկա լինի նվազագույնը հետևյալ տեղեկատվությունը՝</p>	
<p>1. վարկավորվող գումարի նվազագույն և առավելագույն սահմանաչափերը, եթե այդպիսիք սահմանված են Բանկի կողմից,</p>	<p>Մանրաձախ բիզնեսի տնօրինություն</p>

*«Յունիբանկ» ՓԲԸ Բանկի հետ կապված անձանց միջև գործարքների
իրականացման և պարտադիր հրապարակման ենթակա այլ տեղեկությունների
հավաքագրման և պահպանման ընթացակարգ*

	Կորպորատիվ բիզնեսի տնօրինություն
2. վարկերի տրամադրման նվազագույն և առավելագույն ժամկետները, ըստ արժույթի եւ/կամ առկայության դեպքում ըստ այլ գործոնների	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն Կորպորատիվ բիզնեսի տնօրինություն
3.վարկի արժույթը	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն Կորպորատիվ բիզնեսի տնօրինություն
4.մայր գումարի եւ տոկոսագումարների հաճախականությունը (ամսական, եռամսյակային, կիսամսյակային եւ այլ),	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն Կորպորատիվ բիզնեսի տնօրինություն
5. վարկի անվանական եւ սպառողական կրեդիտների դեպքում տարեկան փաստացի տոկոսադրույքները ըստ արժույթի եւ առկայության դեպքում ըստ քայլ գործոնների: Ընդ որում տրվում է աչքի ընկնող նշում, որում բացատրվում է անվանական եւ տարեկան փաստացի տոկոսադրույքների տարբերությունը,	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն
6. վարկերի տոկոսադրույքի հաշվառման կարգը՝ այդ թվում՝ նշելով՝ տոկոսադրույքը կիրառվում է մայր գումարի՞, թե՞ նվազող մնացորդի նկատմամբ, տոկոսադրույքների հաշվարկի ներկայացուցչական օրինակ,	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն Կորպորատիվ բիզնեսի տնօրինություն
7. անվանական տոկոսադրույքի փոփոխություն նախատեսելու դեպքում՝ նշում այդ մասին, փոփոխման կարգն ու պայմանները: Ընդ որում նշումը ներկայացվում է աչքի ընկնող եւ առանձնացված ձեով՝ այլ տառատեսակով, այլ տառաչափով, այլ գույնով կամ այլ ձեով:	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն Կորպորատիվ բիզնեսի տնօրինություն
8.ապահովության /գրավի/ տեսակը, եթե մնան պահանջ առկա է,	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն Կորպորատիվ բիզնեսի տնօրինություն
9.վարկ հարաբերած գրավի արժեք առավելագույն ցուցանիշը՝ տոկոսային արտահայտությամբ /գրավի առկայության դեպքում/	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն Կորպորատիվ բիզնեսի տնօրինություն
10. վարկով ձեռք բերվող ապրանքի, ծառայության կամ աշխատանքի համար վճարվող կանխավճարի եւ վարկի գումարի տոկոսով արտահայտված հարաբերության նվազագույն մեծությունը: Եթե կանխավճարի չափը տարբերվում է՝ կախված վարկավորվող գույքի հատկանիշներից կամ այլ գործոններից, ապա կանխավճար/վարկի հարաբերությունը նշվում է ըստ այդ գործոնների:	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն
11. վարկավորման համար վարկառուի /կրեդիտառուի/ կողմից Բանկի պարտադիր վճարման ենթակա վճարների ցանկը եւ դրանց չափը /միջակայքը/,	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն Կորպորատիվ բիզնեսի տնօրինություն
12.վարկառուի կողմից վարկավորման համար երրորդ անձանց /այդ թվում՝ պետական մարմինների/ կողմից մատուցվող այլ օժանդակ ծառայություններից օգտվելը պարտադիր պայման լինելու դեպքում այդ ծառայությունների գինը /գնի միջակայքը/,	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն Կորպորատիվ բիզնեսի տնօրինություն
13.վարկառուի կողմից իր պարտավորությունները ժամանակին չկատարելու դեպքում սույժերի չափը եւ կիրառման դեպքերը, ինչպես նաեւ նշում հնարավոր բացասական հետեւանքների վերաբերյալ: Ընդ որում նշումը ներկայացվում է աչքի ընկնող եւ առանձնացված ձեով՝ այլ տառատեսակով, այլ տառաչափով, այլ գույնով եւ/կամ այլ ձեով, այդ թվում՝ գրավի բռնագանձման վերաբերյալ, վարկային ռեզիստի վերաբերյալ, վարկառուի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում գրավի հաշվին պարտավորությունները մարելու դեպքում վարկառուի վարկային պարտավորությունները ծածկելու համար գրավը բավարար չլինելու դեպքում վարկառուի այլ գույքի հաշվին պարտավորությունների մարման հնարավորությունը /առկայության դեպքում/:	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն Կորպորատիվ բիզնեսի տնօրինություն

«Յունիքանկ» ՓԲԸ Բանկի հետ կապված անձանց միջև գործարքների իրականացման և պարտադիր հրապարակման ենթակա այլ տեղեկությունների հավաքագրման և պահպանման ընթացակարգ

14. վարկի գումարի տրամադրման եղանակները /օրինակ՝ կանխիկ, անկանխիկ վճարում եւ այլն/,	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն Կորպորատիվ բիզնեսի տնօրինություն
15. վարկի վաղաժամկետ մարման հնարավոր դեպքերը եւ պայմանները, ներառյալ հնարավոր տույժերը,	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն Կորպորատիվ բիզնեսի տնօրինություն
16. սպառողի համար վարկի հասանելիությունը սահմանափակող բոլոր պայմանները,	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն Կորպորատիվ բիզնեսի տնօրինություն
17. վարկ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը,	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն Կորպորատիվ բիզնեսի տնօրինություն
18. Բանկի կողմից վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացման առավելագույն ժամկետը, վարկային հայտ ներկայացնողին որոշման մասին տեղեկացնելու եւ վարկը վարկառուին տրամադրելու ժամկետը,	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն Կորպորատիվ բիզնեսի տնօրինություն
19. Բանկի կողմից հաճախորդին վարկ տրամադրելու դրական որոշման գործոնները եւ վարկի մերժման գործոնները:	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն Կորպորատիվ բիզնեսի տնօրինություն
Վարկերի առանձին տեսակների մասին տեղեկությունները բացի նշված պայմաններից, պարունակում են նաեւ լրացուցիչ տեղեկություններ, մասնավորապես՝	
1. անշարժ եւ շարժական գույքի ձեռքբերման /ինչպես նաեւ բնակարանների վերանորոգման/ համար տրամադրվող վարկերի գծով.	
ա. վարկավորվող գույքի ապահովագրության պահանջի առկայությունը,	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն
բ. նշում այն մասին, թե ապահովագրության համար հիմք է հանդիսանում գույքի շուկայական արժեքը, թե վարկի գումարը,	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն
2. Վարկային գծերի /օվերդրաֆտների/ գծով	
ա. արտոնյալ ժամկետը /գրեյս պերիոդ/ /առկայության դեպքում/	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն
բ. փաստացի օգտագործված միջոցների դիմաց հաշվարկված տոկոսադրույքը, տոկոսագումարների հաշվարկման կարգը	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն
գ. եթե նախատեսվում է տոկոս չօգտագործված միջոցների դիմաց, ապա նշում այդ պայմանների մասին	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն
3. Սպառողական վարկերի գծով՝ վարկի ձեռակերպման վայրը /Բանկում թե առետրի կետերում, գլխամասում թե մասնաճյուղում/:	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն
4. Արտարժույթով տրամադրվող վարկերի գծով՝ շեշտվում է, որ արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա:	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն Կորպորատիվ բիզնեսի տնօրինություն
Վճարային քարտերի մասին տեղեկություններում ներկայացվում է նվազագույնը հետևյալ տեղեկատվությունը՝	
1. տրամադրվող քարտի տեսակը, օրինակ՝ հաշվարկային /դեբետային/, վարկային /կրեդիտային/, կանխավճարային եւ պատականելիությունը որեւէ համակարգին,	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն
2. տրամադրվող քարտի տեսակին բնորոշ մատուցվող ծառայությունների ցանկը /իրականացվող գործառնությունների տեսակները/ կամ կիրառվող սահմանափակումները, այն դեպքում, երբ կան գործառնության կատարման հաճախականության կամ գումարային մեծության սահմանափակումներ, ապա այդ սահմանափակումները նույնպես նշվում են՝ թույլատրելի չափով.	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն
3. քարտի գործողության ժամկետը,	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն
4. քարտային հաշվի արժույթի տեսակը,	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն

«Յունիքանկ» ՓԲԸ Բանկի հետ կապված անձանց միջև գործարքների իրականացման և պարտադիր հրապարակման ենթակա այլ տեղեկությունների հավաքագրման և պահպանման ընթացակարգ

	տնօրինություն
5. քարտային հաշվի դրական մնացորդի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույքը /առկայության դեպքում/,	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն
6. ցանկացած տիպի միջնորդավճարները, որոնք գանձվում են քարտապանից նրան մատուցված ծառայությունների դիմաց, ներառյալ վճարային քարտերի տրամադրման եւ/կամ տարեկան սպասարկման գումարները, վճարային քարտերով գործառնությունների իրականացման համար գանձվող կոմիսիոն կամ այլ վճարները, ներառյալ նաեւ ՀՀ տարածքում ընկերության եւ այլ ընկերությունների կողմից վճարային քարտ սպասարկող կանխիկացման սարքավորումներից /ավտոմատ գանձման մեքենաների, կանխիկացման POS տերմինալների եւ այլ/ օգտվելու դեպքում քարտապանից գանձվող սակագները /նվազագույն եւ առավելագույն չափը/ եւ պայմանները, միջազգային վճարային քարտերով արտասահմանում գործառնությունների իրականացման համար կիրառվող սակագները եւ պայմանները:	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն
7.արտարժույթով արտահայտված գործառնությունների /քարտային հաշվի արժույթը քարտով գործարքի արժույթից տարբերվելու դեպքում/ կատարման ժամանակ կիրառվող փոխարժեքի մասին տեղեկություն	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն
8. քարտ ստանալու /քարտային հաշիվ բացելու/ համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո քարտի տրամադրման եւ ակտիվացման ժամկետներն ու պայմանները	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն
9. վճարային քարտի եւ ՊԻՆ-կոդի եւ/կամ անձը նույնականացնող՝ քարտային համակարգի կանոններով նախատեսված այլ ծածկագրի օգտագործման եւ պահպանման կանոնները,	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն
10.քարտապանի կողմից քարտային գործառնության բողոքարկման ժամանակահատվածը, ինչպես նաեւ բողոքարկման եւ ճշգրտման ժամանակ կիրառվող ընթացակարգերը եւ քարտապանի կողմից դրանց կիրառման կարգը եւ միջոցները,	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն
11.վճարային քարտի կորստի/գողանալու դեպքում կիրառվող ընթացակարգերը եւ դրանց կիրառման կարգը եւ միջոցները,	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն
12. ընկերության կողմից քարտ սպասարկող կանխիկացման սարքավորումների /ավտոմատ գանձման մեքենաների, կանխիկացման POS տերմինալների, այլ/ ցանկը՝ հասցեներով,	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն
13. եթե ընկերությունը մատուցում է հեռահար կապի միջոցով ծառայություններ /Ինտերնետի, բջջային հեռախոսի եւ այլ միջոցով/, ապա հրապարակվում են նաեւ հեռահար ծառայությունների պայմանները եւ կարգը, գործարքի էությունից բխող ընկերության եւ քարտապանի պատասխանատվության սահմանները:	Մանրաձախ բիզնեսի տնօրինություն
Բանկային /ընթացիկ/ հաշիվների գծով տեղեկություններում նշվում է հետևյալ տեղեկատվությունը՝	
1. բանկի կողմից վարվող հաշիվների տարատեսակները,	Օպերացիոն սպասարկման ղեկարտամենտ
2. հաշվի բացման եւ փակման ընթացակարգերը, ժամկետները, սակագները, հաշվի սպասարկման եւ գործառնությունների իրականացման սակագները ,	Օպերացիոն սպասարկման ղեկարտամենտ
3. հաշվով հնարավոր գործառնությունների տեսակները եւ/կամ սահմանափակումները,	Օպերացիոն սպասարկման ղեկարտամենտ
4. պայմանագրով հաշվում առկա դրամական միջոցների նկատմամբ տոկոսներ վճարելու պայման նախատեսված լինելու դեպքում անվանական տոկոսադրույքի եւ տարեկան տոկոսային եկամտաբերության մեծությունը, հաշվարկման կարգը եւ հաշվեգրման ժամկետները: Ընդ որում տրվում է աչքի ընկնող նշում, որում բացատրվում է անվանական տոկոսադրույքի եւ տարեկան տոկոսային եկամտաբերության տարբերությունը,	Օպերացիոն սպասարկման ղեկարտամենտ
5.հաշվի նվազագույն մնացորդի մեծությունը,	Օպերացիոն սպասարկման ղեկարտամենտ
6. հաշվի արժույթը, հաշվի արժույթից տարբերվող այլ արժույթներով կատարվող գործառնությունների իրականացման հնարավորությունը, հաշվի արժույթից տարբերվող արժույթով հաշվին դրամական միջոցների մուտքի եւ ելքի դեպքում փոխարկման համար կիրառվող փոխարժեքը,	Օպերացիոն սպասարկման ղեկարտամենտ
7. հաշվետիրոջ կողմից հաշվով գործառնություններ չկատարելու դեպքում հաշվի պահպանման ծախսերը՝ ելնելով գործարք չկատարելու վաղեմությունից,	Օպերացիոն սպասարկման ղեկարտամենտ
8.հաշվին դրամական միջոցները մուտքագրելու եւ ելքագրելու առավելագույն ժամկետները,	Օպերացիոն սպասարկման ղեկարտամենտ

«Յունիբանկ» ՓԲԸ Բանկի հետ կապված անձանց միջև գործարքների իրականացման և պարտադիր հրապարակման ենթակա այլ տեղեկությունների հավաքագրման և պահպանման ընթացակարգ

9. հաճախորդի պահանջով՝ ՀՀ կամ ՀՀ տարածքից դուրս կատարված գործարքների վերաբերյալ հարցման սակագները ,	Օպերացիոն սպասարկման ղեկարտամենտ
10. հաշվով կատարված գործառնությունների դիմաց քաղվածքների, կրկնօրինակների եւ այլ տեղեկությունների տրամադրման պայմանները,	Օպերացիոն սպասարկման ղեկարտամենտ
11. էլեկտրոնային միջոցներով հաշվում եղած դրամական միջոցների տնօրինման հնարավորությունը /օրինակ՝ Ինտերնետ բանկինգ, մոբայլ բանկինգ եւ այլն/ եւ առկայության դեպքում հավաստման ընթացակարգերը,	Օպերացիոն սպասարկման ղեկարտամենտ
12. բանկային հաշվի պայմանագրի լուծման պայմանները /օրինակ՝ հաշվում պահվող դրամական միջոցների գումարը պայմանագրով նախատեսված նվազագույն չափից պակաս լինելու, մեկ տարվա ընթացքում տվյալ հաշվով գործառնությունների բացակայության դեպքում եւ այլն/, ինչպես նաև պայմանագրի լուծման դեպքում հաշվում առկա դրամական միջոցների մնացորդի նկատմամբ իրականացվող հետագա գործողությունները /օրինակ՝ մնացորդը հաշվետիրոջ կողմից նշված հաշվեհամարին փոխանցելը, ցայահանջ կամ ժամկետային ավանդին վերաձեռակերպելը եւ այլն/,	Օպերացիոն սպասարկման ղեկարտամենտ
13. հայտարարություն այն մասին, որ հաշիվը եւ դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա,	Իրավաբանական ղեկարտամենտ
14. հայտարարություն այն մասին, որ առանց հաշվետիրոջ կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների եւ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա եւ այդ մասին հաշվետիրոջը տեղեկացնելու կարգը,	Իրավաբանական ղեկարտամենտ
15. ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին ՀՀ օրենքով սահմանված կարգով հաշվում առկա դրամական միջոցների մնացորդի երաշխավորված չափի մասին տեղեկացումը,	Օպերացիոն սպասարկման ղեկարտամենտ
16. բանկային հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը,	Օպերացիոն սպասարկման ղեկարտամենտ
Ավանդների գծով տեղեկություններում նշվում է նվազագույնը հետևյալ տեղեկատվությունը՝	
1. «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1,2 եւ 3 մասերով եւ 4 հոդվածով սահմանված տեղեկությունները,	Մանրաձախ ավանդների վարչություն
2. անվանական տոկոսադրույքի եւ տարեկան տոկոսային եկամտաբերության մեծությունը, հաշվարկման կարգը եւ հաշվեգրման ժամկետները ներկայացուցչական օրինակի միջոցով: Ընդ որում տրվում է աչքի ընկնող նշում, որում բացատրվում է անվանակն տոկոսադրույքի եւ տարեկան տոկոսային եկամտաբերության տարբերությունը,	Մանրաձախ ավանդների վարչություն
3. ավանդի տեսակը /օրինակ ցայահանջ, ժամկետային կամ այլ/,	Մանրաձախ ավանդների վարչություն
4. հաշվից քաղվածքների, դրանց կրնօրինակների եւ այլ տեղեկությունների տրամադրման սակագները՝ ըստ իրականացված գործարքի ժամկետի վաղեմության,	Մանրաձախ ավանդների վարչություն
5. հաճախորդի հաշվի պահպանման սակագները՝ կախված հաշվով գործարք չկատարելու վաղեմությունից,	Մանրաձախ ավանդների վարչություն
6. այլ լրացուցիչ պայմաններ, ինչպիսիքն են, օրինակ՝ ժամկետային ավանդը ժամկետից շուտ հետ վերցնելու պայմանները, պայմանագրի գործողության ընթացքում ավանդի գումարի փոփոխությունը, այլ,	Մանրաձախ ավանդների վարչություն
7. հայտարարություն այն մասին, որ երբ ժամկետային ավանդի ավանդատուի պահանջով վերադարձվում է մինչեւ ժամկետի ավարտը կամ մինչեւ բանկային ավանդի պայմանագրում նշված հանգամանքների վրա հասնելը, ավանդատուի տոկոսները վճարվում են բանկի կողմից ցայահանջ ավանդների համար սահմանված չափերով, եթե տոկոսների այլ չափ նախատեսված չէ պայմանագրով,	Մանրաձախ ավանդների վարչություն
8. հայտարարություն այն մասին, որ երբ ավանդատուն ժամկետի ավարտից հետո չի պահանջում վճարել ժամկետային ավանդի գումարը կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները երեսան գալուց հետո վերադարձնել այլ պայմաններով ներդրված ավանդի գումարը, պայմանագիրը երկարաձգված է համարվում ցայահանջ ավանդի պայմաններով, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով,	Մանրաձախ ավանդների վարչություն
9. հայտարարություն այն մասին, որ բանկային ավանդի պայմանագրով որոշված այն	Մանրաձախ ավանդների վարչություն

«Յունիբանկ» ՓԲԸ Բանկի հետ կապված անձանց միջև գործարքների իրականացման և պարտադիր հրապարակման ենթակա այլ տեղեկությունների հավաքագրման և պահպանման ընթացակարգ

ավանդի համար տոկոսների չափը, որը քաղաքացին ներդրել է որոշակի ժամկետի ավարտից կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները վրա հասնելուց հետո այն հետ ստանալու պայմանով, բանկը չի կարող միակողմանի նվազեցնել, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով ,	վարչություն
10. հայտարարություն այն մասին, որ ավանդի հաշվում ավանդատուի անունով կարող է մուտքագրվել նաեւ երրորդ անձանցից ստացված դրամական միջոցները՝ նրա ավանդի հաշվի մասին անհրաժեշտ տվյալների նշումով, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով.	Մանրաձախ ավանդների վարչություն
11. հայտարարություն այն մասին, որ ավանդը կարող է ներդրվել բանկ որոշակի երրորդ անձի անունով մեծան հնարավորության առկայության դեպքում/.	Մանրաձախ ավանդների վարչություն
Դրամական /փողային/ փոխանցումների իրականացման մասին տեղեկությունը պետք է առնվազն ներառի՝	
1. Հայաստանի Հանրապետության տարածքում առանց բանկային հաշվի բացման դրամական /փողային/ փոխանցումների ժամանակ ըստ դրամական /փողային/ փոխանցումների տեսակների /պետական եւ տեղական բյուջե վճարումների ընդունում, կենսաթոշակների, նպաստների եւ սոցիալական այլ վճարների վճարում, հանրային ծառայությունների համար /կոմունալ/ վճարումների ընդունում եւ այլն/ .	
ա. փոխանցումների իրականացման կարգը /այդ թվում՝ առկայության դեպքում անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը/.	Օպերացիոն սպասարկման ղեկարտամենտ
բ. փոխանցումների սակագները,	Օպերացիոն սպասարկման ղեկարտամենտ
գ. փոխանցման իրականացման առավելագույն ժամկետները: Այն դեպքում, երբ կենսաթոշակների, նպաստների եւ սոցիալական այլ վճարների համար ընկերության կողմից սահմանված է հաճախորդներին վճարման ժամանակահատված, ապա տեղեկացում այդ մասին,	Օպերացիոն սպասարկման ղեկարտամենտ
դ. սխալների ուղղման հնարավորության դեպքում կիրառվող ընթացակարգը եւ ժամկետները,	Օպերացիոն սպասարկման ղեկարտամենտ
ե. տեղեկություններ այլ լրացուցիչ վճարների մասին, եթե այդպիսիք նախատեսված են կամ կարող են ծագել գործարքի ընթացքում:	Օպերացիոն սպասարկման ղեկարտամենտ
2. Հայաստանի Հանրապետության տարածքում եւ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս առանց բանկային հաշվի բացման ֆիզիկական անձանց կողմից իրականացվող դրամական /փողային/ փոխանցումների ժամանակ /բացառությամբ ՀՀ տարածքում պետական եւ տեղական բյուջե վճարումների, հանրային ծառայությունների համար /կոմունալ/ վճարումների/.	
ա. դրամական միջոցների փոխանցում նախաձեռնողի, ինչպես նաեւ դրամական միջոցները ստացողի կողմից ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը /այդ թվում՝ անձը հաստատող փաստաթղթերը/ եւ դրանց ներկայացման կարգը,	Դրամական փոխանցումների համակարգի սպասարկման և հսկողության ղեկարտամենտ
բ. փոխանցման արժույթը,	Դրամական փոխանցումների համակարգի սպասարկման և հսկողության ղեկարտամենտ
գ. փոխանցումների առավելագույն ժամկետները,	Դրամական փոխանցումների համակարգի սպասարկման և հսկողության ղեկարտամենտ
դ. փոխանցման առավելագույն սահմանաչափերը /առկայության դեպքում,	Դրամական փոխանցումների համակարգի սպասարկման և հսկողության ղեկարտամենտ
ե. ընկերության եւ առկայության դեպքում այլ անձանց կողմից գանձվող սակագները եւ միջնորդավճարները ըստ յուրաքանչյուր երկրի, տարածաշրջանի, գումարի մեծության, արժույթի եւ այլն, եթե առկա է այդպիսի տարանջատում,	Դրամական փոխանցումների համակարգի սպասարկման և հսկողության ղեկարտամենտ
զ. փոխանցումների ուղղությունները, աշխարհագրությունը եւ այն ընկերությունները,	Դրամական



«Յունիքանկ» ՓԲԸ Բանկի հետ կապված անձանց միջև գործարքների իրականացման և պարտադիր հրապարակման ենթակա այլ տեղեկությունների հավաքագրման և պահպանման ընթացակարգ

որոնցից կարող են փոխանցման շահառուները ստանալ փոխանցված միջոցները,	փոխանցումների համակարգի սպասարկման և հսկողության դեպարտամենտ
է. լրացուցիչ ծառայությունների մատուցման հնարավորության դեպքում հաճախորդին տեղեկացում այդ մասին,	Դ-րամական փոխանցումների համակարգի սպասարկման և հսկողության դեպարտամենտ
ը. փոխանցումը նախաձեռնողի կողմից փոխանցման չեղյալացման, ինչպես նաև փոխանցում ստացողի /շահառուի/ չհայտնաբերվելու դեպքում փոխանցված դրամական միջոցների հետ վերադարձման ընթացակարգը, ժամկետները, ինչպես նաև սխալների ուղղման հնարավորության դեպքում ժամկետները, պայմանները,	Դ-րամական փոխանցումների համակարգի սպասարկման և հսկողության դեպարտամենտ
թ. ընկերության պարտավորությունը հաճախորդին տրամադրել յուրաքանչյուր մատուցված ծառայության վերաբերյալ անդորրագիր,	Դ-րամական փոխանցումների համակարգի սպասարկման և հսկողության դեպարտամենտ
ժ. տեղեկացում դրամական փոխանցում նախաձեռնող /ստացող/ հաճախորդին այն մասին, թե ընկերությունը դրամական փոխանցումների ընդունումը /վճարումը/ կկատարի փոխանցման արժույթով, թե այլ արժույթով:	Դ-րամական փոխանցումների համակարգի սպասարկման և հսկողության դեպարտամենտ

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հարգելի հաճախորդներ, տեղեկացնում ենք Ձեզ, որ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի համաձայն, գրավոր պահանջ ներկայացնելու դեպքում Դուք կարող եք Բանկից /ք.Երևան, Չարենցի 12, թիվ 53, թիվ 1-5/ եռօրյա ժամկետում /մինչև երրորդ աշխատանքային օրվա ավարտը/ ստանալ ստորև նշվող տեղեկատվությունը՝

- Բանկի պետական գրանցման վկայականի և Բանկի կանոնադրության պատճենները,
- Բանկի թողարկած պարտատոմսերի եւ այլ արժեթղթերի հրապարակային տեղաբաշխման դեպքում՝ տեղեկություններ՝ "Արժեթղթերի շուկայի մասին" ՀՀ օրենքով, ինչպես նաեւ դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված ծավալով և կարգով.
- Բանկի ֆինանսական հաշվետվությունները (առնվազն վերջին տարեկան և վերջին եռամսյակային) և հաշվետվությունների վերաբերյալ արտաքին աուդիտի եզրակացության պատճենը,
- տարեկան ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարությունը՝ օրենքով սահմանված ժամկետում,
- շահութաբաժիններ վճարելու մասին որոշումների պատճեններն, ինչպես նաև Բանկի շահութաբաժնային քաղաքականությունը սահմանող ակտերի պատճենները՝ առկայության դեպքում,
- Բանկում նշանակալից մասնակցություն ունեցող մասնակիցների մասին տեղեկատվություն՝ նրանց անունը (անվանումը), Բանկում նրանց ունեցած մասնակցության չափը (բացառությամբ այն անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձանց, որոնք չունեն Բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն՝ բաժնետոմս, բաժնեմաս կամ փայ), նախորդ տարվա ընթացքում նրանց եւ նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից Բանկից ստացված վարկերի եւ այլ փոխառությունների (այդ թվում՝ նաև մարված) վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ չափը, տոկոսադրույքը եւ ժամկետը,
- Բանկի խորհրդի, գործադիր մարմնի անդամների ցանկը և անձնական տվյալները՝ նրանց անունը, ծննդյան ամսաթիվը, կենսագրությունը, Բանկի խորհրդի անդամների, Վարչության տնօրենի, Գլխավոր հաշվապահի, նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից Բանկից ստացված վարկերի եւ այլ փոխառությունների (այդ թվում՝ նաև մարված) վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ չափը, տոկոսադրույքը եւ ժամկետը:

Վերոհիշյալ տեղեկությունների տրամադրման համար գանձվող վճարը չի կարող ավելի լինել դրանց պատրաստման եւ (կամ) փոստային առաքման համար արված փաստացի ծախսերից:

Վարչության նախագահ՝

Վարդան Աթայան